



05/8249-17  
1/46/7021-17

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ  
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

№ 724

«30» հունիսի 2017 թ.

ք.Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ  
ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ՀՀ ԱԻՆ) համակարգի աշխատողների մանկապատանեկան տարիքի երեխաների ճանաչողական ունակությունների զարգացման, ամառային հանգստի կազմակերպման, երեխաների մոտ աղետների նվազեցման գաղափարախոսության ներդրման և իրենց ծնողների աշխատանքային գործունեության ուղղություններին և նպատակներին առավել հանգամանալի ծանոթացնելու նպատակով, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 3-ի 259-Ն որոշման 16-րդ կետի 4-րդ ենթակետով՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

1. Կազմակերպել ՀՀ ԱԻՆ համակարգի աշխատողների 10-14 տարեկան երեխաների ամառային հանգիստը Լոռու մարզի <Գուգարք> մանկական ճամբարում՝ 2017 թ. օգոստոսի 2-ից մինչև օգոստոսի 12-ը:

2. Հաստատել՝

1) ճամբարի կազմակերպման աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելված 1-ի:

2) ճամբարի կազմակերպման ծրագիրը և պայմանները՝ համաձայն հավելված 2-ի:

3. Մանկական ճամբարի պատասխանատու նշանակել ՀՀ ԱԻՆ համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպության նախագահ Լյուդմիլա Մելիքյանին:

4. Հանձնարարել Լ.Մելիքյանին՝

1) Երեխաների ցուցակների կազմելու նպատակով ապահովել սույն հրամանի 2-րդ կետի 2-րդ ենթակետով հաստատված ծրագրի և պայմանների տեղեկացումը ՀՀ ԱԻՆ համակարգի համապատասխան ստորաբաժանումներին:

2) Օրենքով սահմանված կարգով "Գուգարջ" մանկական ճամբարին կատարվելիք վճարումներն իրականացնել արհմիութենական անդամավճարներից:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ արտակարգ իրավիճակների աշխատակազմի ղեկավար Գ. Հայրապետյանին:

A handwritten signature in black ink is written over a grey, semi-transparent CoSign logo. The logo consists of a stylized 'S' shape with a horizontal line through it, and the word 'CoSign' in a sans-serif font below it.

Դ. ՏՈՒՆՅԱՆ

Հավելված 1  
«Արտակարգ  
իրավիճակների նախարարի  
2017թ. «30» հունիսի թիվ 724 հրամանի

**Կ Ա Ձ Մ**

**«ԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ  
ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ**

- Հասմիկ Ամիրխանյան «Արտակարգ իրավիճակների նախարարի խորհրդական
- Լյուդմիլա Մելիքյան «Արտակարգ իրավիճակների նախարարության համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպության նախագահ /ճամբարի պատասխանատու/
- Արշակ Վարդանյան «Արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պետ

**ԾՐԱԳԻՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ**  
**ՀՀ ԱԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՃԱՄԲԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Միավորված Ազգերի Կազմակերպության <<Երեխաների իրավունքների մասին>> կոնվենցիայի հիմնադրույթները առաջնային են դարձրել երեխաների իրավունքների պաշտպանության, այդ թվում նաև հանգստի կազմակերպման խնդիրները:

2. Մանկական ճամբարի այս ծրագրով և պայմաններով (այսուհետ՝ Ծրագիր) կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության համակարգի աշխատողների մանկապատանեկան տարիքի երեխաների ամառային հանգստի կազմակերպումը, նրանց ճանաչողական ունակությունների զարգացմանը, աղետների նվազեցման գաղափարախոսության ներդրմանը, իրենց ծնողների աշխատանքային գործունեության ուղղություններին և նպատակներին առավել հանգամանալի ծանոթացնելուն ուղղված միջոցառումների փաթեթը:

3. ՀՀ ԱԻՆ համակարգի բոլոր ստորաբաժանումներն ունեն մեկ կարևոր առաքելություն. պաշտպանել ազգաբնակչությանը բնական և տեխնածին աղետներից՝ հնարավորինս նվազեցնելով վրահաս վտանգները, որի խոսուն առհավատչյան ՀՀ ԱԻՆ համակարգի բոլոր մարմինների աշխատակիցների ամենօրյա աշխատանքն է: Սակայն համակարգի աշխատակիցներին միշտ չէ որ հաջողվում է իրականացնել իրենց երեխաների ամառային հանգստի իրավունքը՝ բոլորիս հայտնի պատճառներով:

**II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ**

4. Ծրագրի նպատակներն են՝
- 1) աջակցել երեխաների հանգստի կազմակերպմանը.
  - 2) նպաստել նրանց աշխարհայացքի ձևավորմանը և ընդլայնմանը.
  - 3) ստեղծել բարեկամական կապեր համակարգի տարբեր ստորաբաժանումների աշխատակիցների ընտանիքների և երեխաների միջև.
  - 4) երեխաներին ծանոթացնել հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգությանը, ճանաչելի դարձնել հայրենի եզերքը՝ հանգստյան ընթացքում կազմակերպելով ճանաչողական այցեր դեպի տարածաշրջանի պատմամշակութային հուշարձաններ:

### III. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԴԻՐԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5. Ճամբարի հիմնադիրը ՀՀ ԱԻՆ-ն է:

6. Ճամբարի կազմակերպիչներն են ՀՀ ԱԻՆ-ը և ՀՀ ԱԻՆ համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպությունը:

7. Ճամբարը կազմակերպվում է ՀՀ Լոռու մարզի «Գուգարք» մանկական ճամբարում, 2017 թվականի օգոստոսի 2-12-ը:

8. ՀՀ ԱԻՆ համակարգի մարմինների մարզային ստորաբաժանումների և մարզերի ՊՈԱԿ-ների աշխատակիցները իրենց երեխաներին պետք է ուղեկցեն մինչև ՀՀ Լոռու մարզի «Գուգարք» ճամբար օգոստոսի 2-ին ժամը 11-12-ը, իսկ ճամբարի ավարտից հետո երեխաներին հետ տանեն օգոստոսի 12-ին ժամը 11-ին: Երևանում ապրող երեխաները կուղևորվեն «Գուգարք» ՀՀ ԱԻՆ շարահրապարակից օգոստոսի 2-ին առավոտյան ժամը 9-ին, իսկ վերադարձին նրանց կդիմավորեն օգոստոսի 12-ին ժամը 14-15-ը՝ Երևանի Սախարովի անվան հրապարակին կից ՀՓԶ-ի տարածքում:

### IV. ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

9. Ճամբարում կարող են հանգստանալ միայն ՀՀ ԱԻՆ համակարգի աշխատողների, ՀՀ-ում բնակվող, 10-14 տարեկան երեխաները:

10. Ճամբարում կընգրկվի շուրջ 115 երեխա:

11. Երեխաները կհանգստանան Լոռու գեղատեսիլ բնության գրկում, նրանց համար կկազմակերպվեն միջոցառումներ, ինտելեկտուալ և սպորտային խաղեր, արշավներ, էքսկուրսիաներ՝ դեպի պատմամշակութային հուշարձաններ և հետաքրքիր հանդիպումներ մշակույթի և արվեստի գործիչների հետ:

12. Երեխաների ընտրությունը կկատարվի համապատասխան ստորաբաժանման ներսում՝ ելնելով երեխայի տարիքից, տվյալ հիմնարկում ծնողի աշխատանքի ստաժից, նրա գործունեությունից և սոցիալական վիճակից՝ արդարության սկզբունքի պահպանման պայմանով: Ցանկալի է, որ ընտրված երեխաները լինեն ակտիվ, երգեն, պարեն, նկարեն, ունենան սպորտային պատրաստվածություն:

13. Տվյալ ստորաբաժանմանը նախատեսված տեղերի մասին կտեղեկցվի «Մալբրի» համակարգով, ԱԻՆ ղեկավարության հետ քննարկումներից հետո:

14. Ճամբար մեկնող երեխաները պետք է ունենան տաք, հարմարավետ և սպորտային հագուստ, հիգիենայի պարագաներ /ատամի խոզանակ, օճառ, ատամի մածուկ, ներքնաշորեր, լրացուցիչ գուլպաներ, կիսագուլպաներ, լողազգեստ, սրբիչ և այլն/:

15. Արգելվում է ճամբար բերել գազավորված ըմպելիքներ, տարբեր չիփսեր, թխվածքաբլիթներ /պեչենի/, գումար, քանի որ ճամբարում երեխաներին տրվում է բարձրակարգ և առատ սնունդ:

16. ՀՀ ԱԻՆ համակարգի ստորաբաժանումները մինչև 2017 թվականի հուլիսի 14-ը, ՀՀ ԱԻՆ համակարգի աշխատողների արհմիութենական

կազմակերպության նախագահի անունով պետք է ներկայացնեն ճամբարի մասնակցության հայտ, որը պետք է ներառի հետևյալ փաստաթղթերը՝

1) ստորաբաժանման աշխատողի անուն, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, բջջային հեռախոսահամարը.

2) աշխատողի երեխայի անուն, ազգանունը և ծննդյան վկայականի պատճեն:

17. Ճամբարի մասին առավել մանրամասն տեղեկությունները տրամադրվում է [gugarqcamp/FaceBook](http://gugarqcamp/FaceBook) կամ [gugarq.am](http://gugarq.am) ինտերնետային կայքի միջոցով և ՀՀ ԱԻՆ համակարգի աշխատողների արհմիութենական կազմակերպության նախագահ Լ. Մելիքյանի կողմից (հեռ. ներքին 10-27, քաղաքային 010-31-77-27, բջջ. 093-87-18-46):

18.Սույն Ծրագրի 16-րդ կետում նշված ժամկետի ավարտից հետո ուշացած հայտերը չեն ընդունվում: